

# Դրամայնացման գործիքներ, Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի ԶԼՄ-ների, բլոգերների և մեդիա անձնավորությունների համար

## Ֆինանսական լանդշաֆտը՝ թվային բովանդակություն ստեղծողների համար

Աննա Բարսեղյան, Արթուր Պապյան և Օլեգ Խոմենոկ

:Fojo
Linnaeus University

# Դրամայնացման գործիքներ Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի ԶԼՄ-ների, բլոգերների և մեդիա անձնավորությունների համար

Ֆինանսական լանդշաֆտը՝ թվային բովանդակություն ստեղծողների համար

**Fojo Media Institute**

Աննա Բարսեղյան, Արթուր Պապյան և Օլեգ Խոմենոկ

Fojo media insight editor:
Veronika Menjoun
© Fojo Media Institute, 2025
ISBN: 978-91-8082-274-9
https://doi.org/10.15626/fojo.i.202504iii

## Բովանդակություն


**Ներածություն** 3

**Դրամայնացման գործիքներ** 4

**Դրամայնացման հարթակների և գործիքների նկարագրությունը** 6

**Քրաուդֆանդինգի հարթակներ** 6

- **GoFundMe** 6
- **Kickstarter** 9
- **Crowdfundr** 12
- **Patreon`** 14
- **Buy Me a Coffee** 17
- **KUNA Pay** 19
- **Ko-Fi** 21
- **Biggggidea.com** 24
- **Particip.md** 26
- **ReArmenia** 28

**Համատեքստային գովազդի և բովանդակության վաճառքի գործիքներ** 31

- **Google AdSense** 31
- **YouTube գործընկեր ծրագիր** 33
- **Telegram Tribute** 35
- **Medium** 36

**Օրինակներ և հաջողության պատմություններ** 39

- **Kyiv Independent** 39
- **Liga.net** 40
- **OC Մեդիա** 41
- **New Voice Premium** 42
- **Մեդիամաքս Պրեմիում** 43
- **«Լրատվական» ռադիո** 44
- **JAMnews** 45
- **Netgazeti** 46
- **Bihus.info** 47

**Հավելված I** 48

**Վճարային համակարգեր, որոնք օգտագործվում են գլոբալ քրաուդֆանդինգի և դրամայնացման հարթակների կողմից վճարումների համար.** 48

**Հեղինակներ** 52

# Ներածություն

Արագ զարգացող թվային աշխարհում լրատվամիջոցները, բլոգերները և մեդիա անձինք մշտապես փնտրում են արդյունավետ ու հուսալի վճարային համակարգեր և դրամայնացման գործիքներ՝ իրենց բովանդակության ստեղծմանն ու տարածմանն աջակցելու համար:

Երբ ավանդական եկամտի աղբյուրները սպառվում են՝ հիմնականում այն պատճառով, որ գովազդային եկամուտները կլանում են Facebook-ի և Google-ի նման գերիշխող հարթակները, ի հայտ են գալիս և արագորեն զարգանում են բովանդակության արտադրության ու բաշխման այլընտրանքային գործիքներ ու եկամտի հոսքեր:

Այս հետազոտությունն անդրադառնում է Հայաստանում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում հասանելի դրամայնացման գործիքներին ու վճարային համակարգերին՝ նկարագրելով դրանց գործառույթները, առավելությունները, սահմանափակումները և կիրառման օրինակները:

Այս հետազոտությունն իրականացրել են Աննա Բարսեղյանը և Արթուր Պապյանը՝ Օլեգ Խոմենոկի խմբագրությամբ՝ «Strong partnerships boost resilience. Supporting independent media networking in Eastern Europe» նախագծի շրջանակներում: Այն նախատեսված է Արևելյան Եվրոպայի մեդիա մենեջերների և խմբագիրների, ինչպես նաև մեդիա բովանդակություն ստեղծողների համար: Նախագիծն իրականացնում է FOJO Մեդիա ինստիտուտը (Շվեդիա) Շվեդիայի ինստիտուտի (SI) ֆինանսական աջակցությամբ:

Այս հրապարակումը տարածվում է Creative Commons Attribution-NonCommercial-ShareAlike 3.0 Unported արտոնագրի պայմաններով: Դուք կարող եք ազատորեն պատճենել, տարածել, ցուցադրել և ստեղծել այս հրատարակության ածանցյալ աշխատանքներ՝ պայմանով, որ պահպանեք FOJO ինստիտուտին վերագրումը, աշխատանքը չօգտագործեք առևտրային նպատակներով, և որ այս հրապարակումից բխող ցանկացած ստեղծագործություն արտոնագրեք նույն պայմաններով.
[http://creativecommons.org/licenses/by-nc-sa/3.0/](http://creativecommons.org/licenses/by-nc-sa/3.0/)

## Դրամայնացման գործիքներ

Ժամանակակից մեդիա դաշտում դրամայնացման բազմաթիվ գործիքներ կան, որոնք օգնում են շահույթ չհետապնդող կազմակերպություններին, անկախ ստեղծագործողներին և մեդիա հարթակներին ֆինանսավորում ստանալ և զարգացնել իրենց նախագծերը: Դրանց շարքում են նվիրատվությունները, բաժանորդագրությունները, ակումբային մոդելները, ֆրիմիում մոտեցումը, գործընկերային և հովանավորչական ծրագրերը, գովազդազերծ վճարովի մոդելները, համատեքստային գովազդը, առցանց խանութներն ու քրաուդֆանդինգի համակարգերը:

Այս գործիքներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկություններն ու առավելությունները, որոնք թույլ են տալիս բովանդակություն ստեղծողներին ընտրել իրենց լսարանից եկամուտ ստանալու և կայուն ֆինանսական հոսքեր ապահովելու ամենահարմար ռազմավարությունները:

1. **Նվիրատվություններ և քրաուդֆանդինգ համակարգերը** թույլ են տալիս ֆինանսավորում ստանալ օգտատերերի և աջակիցների կամավոր նվիրատվությունների միջոցով: Patreon և Buy Me a Coffee հարթակները պարզեցնում են թե՛ միանվագ, թե՛ պարբերական նվիրատվությունների հավաքագրման գործընթացը՝ այս բիզնես մոդելը դարձնելով առավել կիրառելի բովանդակություն ստեղծողների համար:
2. **Բաժանորդագրությունն** ապահովում է կայուն եկամուտ օգտատերերի կանոնավոր՝ ամսական կամ տարեկան վճարումների միջոցով: Այս մոդելն ակտիվորեն կիրառում են մեդիա ընկերություններն ու առցանց հեռարձակողները՝ լսարանին տրամադրելով մշտական հասանելիություն իրենց մեդիա արտադրանքին և ծառայություններին:
3. **Ակումբային մոդելը** ենթադրում է փակ համայնքների ստեղծում, որի անդամները ստանում են հատուկ արտոնություններ՝ պրեմիում բովանդակություն, միջոցառումների հասանելիություն և այլ բացառիկ հնարավորություններ: Այս ձևաչափը ոչ միայն եկամուտ է ապահովում, այլև ստեղծում է ամուր կապեր անդամների միջև՝ զարգացնելով նրանց հավատարմությունն ապրանքանիշին և ամրապնդելով ընտրյալ շրջանակին պատկանելու զգացողությունը:
4. **Freemium մոդելը** համատեղում է հիմնական գործառույթների անվճար հասանելիությունը վճարովի պրեմիում հնարավորությունների հետ: Այս մոտեցումը հատկապես տարածված է ծրագրային ապահովման և բջջային հավելվածների ոլորտում: Օգտատերերը կարող են անվճար փորձարկել հիմնական արտադրանքը, այնուհետև որոշել գնել լրացուցիչ գործառույթներ՝ հիմնվելով ծառայության իրական առավելությունների վրա:
5. **Գործընկերային և հովանավորչական ծրագրեր** հիմնված են փոխշահավետ համագործակցության վրա, որտեղ ապրանքանիշներն ու կազմակերպությունները ֆինանսավորում են տրամադրում իրենց արտադրանքի կամ ծառայությունների

գովազդի դիմաց: Այս մոդելը դարձել է եկամտի հիմնական աղբյուր բազմաթիվ սոցցանցային ինֆլյուենսերների, բլոգերների և մեդիա հարթակների համար:

6. **Գովազդազերծ վճարովի մոդելը** հնարավորություն է տալիս օգտատերերին սպառել բովանդակությունն առանց գովազդային ընդմիջումների: Այս մոտեցումը լայնորեն կիրառում են լրատվական կայքերն ու բլոգային հարթակները՝ ընթերցողներին առաջարկելով գովազդային տարրերից զերծ բովանդակություն:
7. **Համատեքստային գովազդը** թույլ է տալիս եկամուտ ստանալ լսարանի ներգրավվածությունից՝ ցուցադրելով թիրախավորված գովազդային նյութեր: Google AdSense (https://adsense.google.com/start/), Yandex Direct (https://yandex.com/support/direct/), YouTube-ի գործընկերային ծրագիրը (https://www.youtube.com/intl/en_us/creators/partner-program/) և Facebook-ի լսարանի ցանցը (https://www.facebook.com/business/help/adsmanagerbuiltin/788333711222886/), առաջարկում են օգտատերերի հետաքրքրություններին համապատասխան գովազդ տեղադրելու հնարավորություններ: Այս հարթակներում կիրառվող մեքենայական ուսուցման ալգորիթմները բարձրացնում են գովազդային փոխազդեցության արդյունավետությունը:
8. **Առցանց խանութներ և ապրանքների վաճառք** Shopify (https://www.shopify.com/), Etsy (https://www.etsy.com/) հարթակները, WooCommerce (https://woocommerce.com/) փլագինով կայքերում ավելացվող գործիքները հնարավորություն են տալիս ստեղծել առցանց խանութներ: Այս ծառայությունները թույլ են տալիս վաճառել բրենդային ապրանքների լայն տեսականի՝ հագուստից և աքսեսուարներից մինչև գրքեր ու հուշանվերներ, ինչն օգնում է ամրապնդել կապը լսարանի հետ և ստեղծել եկամտի լրացուցիչ աղբյուրներ:

## Դրամայնացման հարթակների և գործիքների նկարագրությունը

Այս բաժնում կքննարկենք դրամայնացման տարբեր հարթակներն ու գործիքները, դրանց առանձնահատկություններն ու կիրառման եղանակները: Մենք մանրամասն կանդրադառնանք կոնկրետ գործիքների, որոնք թույլ են տալիս ստանալ նվիրատվություններ, կազմակերպել բաժանորդագրություններ, մեկնարկել հովանավորչական ծրագրեր և առցանց խանութներ, իրականացնել հանգանակություններ քրաուդֆանդինգային հարթակներում:

Այս գործիքների վերլուծությունը կօգնի ձեզ ընտրել բովանդակության դրամայնացման և կայուն եկամտի ապահովման առավել արդյունավետ ռազմավարությունները:

# Քրաուդֆանդինգի հարթակներ

## GoFundMe

**Հասանելի է հարթակի կողմից չաջակցվող երկրների անհատներին կամ կազմակերպություններին, ինչպիսիք են Հայաստանը, Վրաստանը, Մոլդովան, Ուկրաինան և Լեհաստանը՝ աջակցվող երկրի գործընկերոջ հետ համագործակցության միջոցով:*

GoFundMe (https://www.gofundme.com ) հարթակը քրաուդֆանդինգի առաջատար հարթակներից մեկն է, որը թույլ է տալիս մարդկանց և կազմակերպություններին միջոցներ հայթայթել տարբեր նպատակների համար:

Ներկայում GoFundMe-ի աշխարհագրական ծածկույթը սահմանփակ է. Հայաստանը, Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան չկան պլատֆորմի կողմից սպասարկվող 20 երկրների ցանկում: Սա նշանակում է, որ այս երկրների բնակիչները չեն կարող ուղղակիորեն դրամահավաք կազմակերպել կամ ստանալ հավաքված գումարները:

Միջոցները ստանալու համար անհրաժեշտ է համագործակցել GoFundMe-ի կողմից աջակցվող 20 երկրներից մեկում գործող կազմակերպության հետ: Դրամահավաքը պետք է բացվի այդ երկրում՝ բավարարելով հետևյալ պայմանները. տեղական բանկային հաշվի առկայություն, պետության կողմից տրված անձը հաստատող փաստաթուղթ, հարկային կամ սոցիալական ապահովության համար, գործող հեռախոսահամար, տվյալ երկրում բնակության հասցե: Կարևոր է նշել, որ դրամահավաքի կազմակերպիչը պետք է լինի չափահաս (18 տարեկան կամ ավելի):

GoFundMe-ն, չնայած իր աշխարհագրական սահմանափակումներին, մնում է նախընտրելի հարթակ շնորհիվ մի քանի առավելությունների՝ գլոբալ հասանելիության, վստահության բարձր մակարդակ և վճարումների անվտանգ գործընթաց, ինչն օգնում է նվիրաբերողներ ներգրավել ամբողջ աշխարհից: Որպես այլընտրանք, մարդիկ և կազմակերպությունները Հայաստանում, Վրաստանում, Մոլդովայում, Ուկրաինայում և Լեհաստանում կարող են աշխատել աջակցվող երկրների գործընկերների հետ, որոնք կզբաղվեն վարչական հարցերով, ինչպիսիք են դրամահավաքների կազմակերպումը և վճարումների մշակումը: Նման համագործակցությունը հնարավորություն է տալիս ստանալ նվիրատվություններ՝ չնայած GoFundMe-ի սահմանափակումներին:

**Ինչպես սկսել քարոզարշավը**

Սկսելու համար գրանցվեք հարթակում և ստեղծեք դրամահավաքի էջ: Նշեք այն երկիրը, որտեղ կուղարկվեն հավաքագրված միջոցները, նշեք նաև՝ արդյոք գումարը հավաքում եք ձե՞զ, թե մեկ ուրիշի համար, սահմանեք հավաքագրման նպատակը և տեղեկատվություն տրամադրեք ձեր և նախագծի մասին: Տեղեկությունները մուտքագրելուց հետո մեկնարկեք ձեր արշավը:

GoFundMe-ում դրամահավաքները ակտիվանում են հենց ստեղծվելուն պես՝ առանց ստուգման կամ հաստատման անհրաժեշտության:









Արշավը գործարկելուց հետո կարգավորեք միջոցների փոխանցումը: Դա անելու համար հաստատեք ձեր էլ.փոստի հասցեն, մուտքագրեք ձեր բանկային տվյալները և տրամադրեք ձեր ամբողջական անունը, ծննդյան ամսաթիվը, քաղաքացիությունը և անձը հաստատող այլ անհրաժեշտ տեղեկություններ: Սա երաշխավորում է միջոցների անվտանգ փոխանցում նշված հաշվին:



GoFundMe-ում դրամահավաքների ստեղծումն անվճար է, սակայն կա գործարքների մշակման վճար՝ 2,9% գումարած $0,30 յուրաքանչյուր նվիրաբերված գումարի համար: Միջոցները էլեկտրոնային եղանակով փոխանցվում են կազմակերպչի գրանցված բանկային հաշվին 2-10 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե հավաքագրումը կազմակերպվում է մեկ այլ անձի համար, կարող եք նշել շահառուին, ով անմիջապես կստանա միջոցները:

GoFundMe-ում չկան վերջնաժամկետներ, նվազագույն կամ առավելագույն նպատակներ, ինչը կազմակերպիչներին թույլ է տալիս ստանալ դրամական միջոցները, նույնիսկ եթե սահմանված նպատակին չեն հասել:

## Kickstarter

**Հասանելի է հարթակի կողմից չաջակցվող երկրների անհատներին կամ կազմակերպություններին, ինչպիսիք են Հայաստանը, Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան՝ աջակցվող երկրի գործընկերոջ հետ համագործակցության միջոցով:*

*Հասանելի է Լեհաստանում գտնվող ֆիզիկական անհատներին և կազմակերպություններին:*

Kickstarter-ը (https://www.kickstarter.com) դրամահավաքի հարթակ է, որն ուղղված է տարբեր ոլորտներում ստեղծագործական նախագծերի ֆինանսավորմանը, այդ թվում՝ արվեստի, կոմիքսների, դիզայնի, ֆիլմերի և տեսահոլովակների, խաղերի, լրագրության, լուսանկարչության, հրատարակչության, տեխնոլոգիայի և թատրոնի: Յուրաքանչյուր նախագիծ պետք է ունենա հստակ և իրագործելի նպատակ, ինչպես, օրինակ, երաժշտական ալբոմի թողարկում, գրքի հրատարակում կամ նորարարական արտադրանքի ստեղծում:

Նախագծի հեղինակները ինքնուրույն սահմանում են դրամահավաքի նպատակներն ու ժամկետները, որոնք կարող են տևել 1-ից 60 օր: Ծրագրի մեկնարկից հետո նպատակը և վերջնաժամկետը չեն կարող փոխվել: Արշավը հնարավոր չէ դադարեցնել, սակայն ստեղծողները կարող են ցանկացած պահի չեղարկել նախագիծը և նորից սկսել:

Հարթակը գործում է «ամեն ինչ կամ ոչինչ» սկզբունքով. եթե նախագիծը չի հասնում դրամահավաքի իր նպատակին, նվիրաբերողներից միջոցներ չեն գանձվում, և ստեղծողը գումար չի ստանում: Այս մոտեցումն ապահովում է, որ ստեղծողները ստանան իրենց նախագծերն ավարտելու համար անհրաժեշտ ամբողջ բյուջեն:




**Հասանելիություն**

Չնայած Kickstarter-ն ընդունում է նվիրաբերություններ ամբողջ աշխարհից, միայն որոշ երկրների բնակիչներն ու ընկերությունները, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Կանադան, Ավստրալիան և եվրոպական երկրների մեծ մասը, կարող են ուղղակիորեն արշավներ ստեղծել:

Ծրագրի ստեղծողները Kickstarter-ի կողմից չաջակցվող տարածաշրջաններից, ինչպիսիք են Վրաստանը և Հայաստանը, կարող են օգտվել այնպիսի ծառայություններից, ինչպիսիք են Stripe Atlas-ը, որը թույլ է տալիս գրանցել ընկերություն ԱՄՆ-ում, բացել տեղական բանկային հաշիվ և կառավարել Kickstarter-ի նախագծերը ԱՄՆ դոլարով:

Stripe Atlas-ն արժե 400 դոլար մեկանգամյա ընկերության ստեղծման համար և տարեկան լրացուցիչ 100 դոլար գրանցված գործակալի ծառայությունների համար:

**Ինչպես սկսել նախագիծը**

Արշավը մեկնարկելու համար անհատները պետք է լինեն 18 տարեկանից բարձր, բնակվեն այն երկրում, որտեղ իրականացվում է նախագիծը և ունենան անձը հաստատող փաստաթուղթ: Նախագիծը պետք է գրանցված լինի այն երկրում, որտեղ բիզնեսը կամ կազմակերպությունը իրավաբանորեն գրանցված է, և անհրաժեշտ է տրամադրել ինքնությունը հաստատող և հարկային փաստաթղթեր: Պահանջվում է նաև տեղական բանկային հաշիվ, ինչպես նաև կրեդիտային կամ դեբետային քարտ՝ անհատի կամ կազմակերպության անունով:

Kickstarter-ում նախագծի մեկնարկը սկսվում է ձեր գաղափարի համար կատեգորիայի, ենթակարգի և գտնվելու վայրի ընտրությամբ և գրանցմամբ: Հարթակի կանոնները վերանայելուց հետո ստեղծողները ձևավորում են իրենց նախագիծը՝ ավելացնելով վերնագիր, նկարագրություն, դրամահավաքի նպատակը, քարոզարշավի տևողությունը և պարգևատրումներ աջակցողների համար: Այնուհետև տրամադրում են իրենց անձնական տվյալները և վճարման մանրամասները, ինչից հետո նախագիծն ուղարկվում է վերանայման:

Trust & Safety Kickstarter-ի թիմը վերանայում է նախագծերը՝ համոզվելու, որ դրանք համապատասխանում են հարթակի կանոններին և ունեն հստակ նպատակներ: Այս գործընթացը կարող է տևել մինչև երեք աշխատանքային օր: Եթե անհրաժեշտ լինեն ուղղումներ, ժամանակը կարող է երկարել: Հաստատումից հետո նախագիծը պատրաստ է մեկնարկի:






**Միջնորդավճար**

Նախագծի հաջող ֆինանսավորման դեպքում Kickstarter-ը գանձում է միջնորդավճար՝ հավաքագրված ընդհանուր միջոցների 5%-ի չափով: Բացի այդ, վճարային օպերատոր Stripe-ը պահում է վճարումների մշակման միջնորդավճար՝ մոտ 3-5%:

## Crowdfundr

**Հասանելի է Վրաստանի, Մոլդովայի և Լեհաստանի անհատներին և կազմակերպություններին:*

Crowdfundr (https://crowdfundr.com) գլոբալ քրաուդֆանդինգի հարթակ է հեղինակների, արվեստագետների համար: Այն տրամադրում է դրամահավաքի ճկուն գործիքներ, ներառյալ հարմարեցված արշավներ և ընտրություն ֆինանսավորման երկու մոդելների միջև.

- **Ամեն ինչ կամ ոչինչ.** նվիրաբերությունները փոխանցվում են միայն այն դեպքում, եթե արշավը հասնում է իր նպատակին մինչև սահմանված ժամկետի ավարտը: Այս մոդելը իդեալական է այն նախագծերի համար, որոնք հաջող ավարտի համար պահանջում են նվազագույն բյուջե: Նպատակին հասնելուց հետո ստեղծողները կարող են երկարաձգել քարոզարշավը կամ ավարտել այն:
- **Պահիր ամեն ինչ.** նվիրաբերությունները փոխանցվում են անմիջապես՝ ստեղծողներին հնարավորություն տալով արագ ստանալ դրամական միջոցներ՝ անկախ նրանից նպատակային գումարը հավաքվել է, թե ոչ:

**Ինչպես սկսել քարոզարշավը**

Արշավը մեկնարկելու համար ստեղծողները պետք է գրանցվեն հարթակում և հաստատեն իրենց հաշիվը, ապա ստեղծեն իրենց արշավը: Սա ներառում է վերնագրի, նկարագրության, կատեգորիայի, մեդիա բովանդակության (լուսանկարներ/տեսանյութեր), ֆինանսավորման տեսակի, նպատակի և վերջնաժամկետի ավելացում:

Այնուհետև անհրաժեշտ է նշել բանկային հաշվի գտնվելու վայրը, կցել PayPal կամ Stripe հաշիվը և ընտրել վճարման նախընտրելի մոդելը: Արշավները մեկնարկում են առանց վերանայման, սակայն հեղինակները պետք է համոզվեն, որ դրանք համապատասխանում են Crowdfundr-ի կանոններին և տեղական օրենքներին: Անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը տրամադրելուց հետո արշավը պատրաստ է մեկնարկի:




**Հասանելիություն**

Crowdfundr-ը հասանելի է ամբողջ աշխարհում, սակայն, քանի որ վճարումները մշակվում են Stripe-ի և PayPal-ի միջոցով, հասանելիությունը կարող է կախված լինել տարածաշրջանից: Նվիրաբերված միջոցները փոխանցվում են անմիջապես ստեղծողի Stripe կամ PayPal հաշվին, և գործարքի ընթացքում պահվում է միջնորդավճար:




**Միջնորդավճար**

Crowdfundr-ը ստեղծողներին հնարավորություն է տալիս ընտրել, թե ինչպես են բաշխվում միջնորդավճարները: Միջնորդավճարի երեք տարբերակ կա.

1. **Կամավոր թեյավճար**. հարթակի վճար չկա, աջակիցները կարող են թեյավճար թողնել Crowdfundr-ին: Ստեղծողները վճարում են միայն հավաքագրված գումարի փոխանցման միջնորդավճար, որը կազմում է մոտ 3,5%:
2. **Միջնորդավճարի փոխհատուցում.** աջակիցներին առաջարկվում է վճարել հարթակի 5% միջնորդավճարը և վճարումների մշակման ծախսերը: Եթե նրանք հրաժարվում են, վճարում է ստեղծողը:
3. **Հաստատուն դրույքաչափ.** արշավի պատասխանատուն վճարում է հարթակի 5% միջնորդավճարը, ինչպես նաև վճարումների մշակման ծախսերը, որոնք ընդհանուր կազմում են մոտ 8,5%:

## Patreon՝

**Հասանելի է Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի և Լեհաստանի բովանդակություն ստեղծողների համար:*

Patreon-ը (https://www.patreon.com ) հարթակ է, որն օգնում է բովանդակություն ստեղծողներին ձևավորել համայնք, կիսվել բացառիկ բովանդակությամբ և գումար վաստակել՝ բաժանորդագրություններ առաջարկելով կամ թվային արտադրանք վաճառելով: Պլատֆորմը գործիքներ է տրամադրում երաժիշտների, գրողների, փոդքասթերների, դիզայներների և այլ ստեղծագործ մասնագետների համար՝ թույլ




տալով նրանց հարմարեցնել էջերը, կազմակերպել գրառումները և շփվել իրենց լսարանի հետ չաթերի, էլ.փոստի և բաժանորդագրությունների միջոցով:




**Patreon-ն առաջարկում է.**

- **Վճարովի բաժանորդագրություններ.** Բովանդակություն ստեղծողները կարող են առաջարկել ամսական կամ տարեկան բաժանորդագրություններ՝

տարբեր մակարդակներով և արտոնություններով, ինչպիսիք են բովանդակության վաղ հասանելիությունը կամ բացառիկ բովանդակությունը:
- **Թվային ապրանքների վաճառք.** տեսանյութեր, աուդիո ֆայլեր, արվեստի գործեր, ձեռնարկներ և ավելին վաճառելու հնարավորություն:

### Ինչպես սկսել օգտագործել Patreon

Patreon հաշիվ ստեղծելու համար գրանցվեք անվճար, ստեղծեք ձեր էջը, ընտրեք եկամուտ ստանալու ձևաչափը՝ վճարովի բաժանորդագրություններ կամ թվային ապրանքների վաճառք, և սկսեք ձեր էջի առաջխաղացումը՝ այն կիսելով ձեր լսարանի հետ:




Ընտրեք գումար ստանալու ձեր նախընտրած եղանակը, մուտքագրեք անհրաժեշտ բանկային կամ վճարային տվյալները և ավարտեք վավերացման գործընթացը: Patreon-ն առաջարկում է բանկային փոխանցումներ Stripe-ի, Paypal-ի և Payoneer-ի միջոցով:




**Patreon բաժանորդագրության տարբերակներ և միջնորդավճարներ**

Patreon-ն ստեղծողներին առաջարկում է բաժանորդագրության երկու հիմնական տարբերակ՝

- **Pro.** Patreon-ը պահում է ձեր եկամուտի 8%-ը, ինչպես նաև հավելյալ վճարներ՝ վճարումների մշակման, արժույթի փոխարկման և միջոցների դուրսբերման համար (մոտ 2,9%-ից 5%):
- **Պրեմիում.** պահում է ձեր եկամուտի 12%-ը, ինչպես նաև նույն լրացուցիչ վճարները՝ վճարումների մշակման, արժույթի փոխարկման և միջոցների դուրսբերման համար:

Բացի բաժանորդագրություններից, Patreon-ն առաջարկում է նաև **Commerce** ծառայությունը, որը ստեղծողներին հնարավորություն է տալիս վաճառել թվային ապրանքներ կամ իրականացնել մեկանգամյա վաճառք: Այս դեպքում Patreon-ը գանձում է վաճառքներից ստացված ամսական եկամտի 5%-ը, ինչպես նաև վճարների մշակման, արժույթի փոխարկման, միջոցների դուրսբերման և սահմանված հարկերի վճարները:

## Buy Me a Coffee

**Հասանելի է Հայաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի և Լեհաստանի բովանդակություն ստեղծողների համար:*

Buy Me a Coffee-ն (https://buymeacoffee.com) անդամակցության և նվիրատվության հարթակ է, որը թույլ է տալիս բովանդակություն ստեղծողներին, արվեստագետներին, գրողներին և այլոց ֆինանսական աջակցություն ստանալ իրենց լսարանից: Աջակիցները կարող են.

- Կատարել մեկանգամյա նվիրատվություն («սուրճ գնել»):
- Բաժանորդագրվել՝ շարունակական աջակցություն ցուցաբերելու համար:
- Գնել թվային կամ ֆիզիկական ապրանքներ առցանց խանութից:




Բովանդակություն ստեղծողները կարող են ձևավորել իրենց էջերը՝ ընտրելով սեփական գույները, պատկերներն ու բրենդային տարրերը: Նրանք կարող են ստեղծել անդամակցության տարբեր մակարդակներ՝ առանձնահատուկ արտոնություններով, օրինակ՝ բացառիկ հրապարակումներ, կուլիսային բովանդակություն կամ անհատական շնորհակալություն, և դրանք ներկայացնել իրենց լսարանին:

**Ինչպես գրանցվել**

Buy Me a Coffee հարթակում գրանցվելու համար ընտրեք օգտանուն, որը կներկայացնի ձեր բրենդը. այն կլինի ձեր URL-հասցեի մի մասը (օրինակ՝ buymeacoffee.com/username): Գրանցվեք էլ. փոստի կամ Google/Apple հաշվի միջոցով և հաստատեք ձեր էլ. փոստը՝ հաշիվը ակտիվացնելու համար:

Լրացրեք ձեր պրոֆիլը՝ ավելացնելով անուն, կարճ կենսագրություն և լուսանկար:  Կցեք ձեր առկա **Stripe** հաշիվը կամ ստեղծեք նոր հաշիվ հարթակի միջոցով՝ վճարումներ ստանալու համար:



Անհատականացրեք ձեր էջը այն գույներով և պատկերներով, որոնք համապատասխանում են ձեր բրենդին: Ստեղծեք անդամակցության մի քանի մակարդակներ յուրահատուկ արտոնություններով, ինչպիսիք են եզակի բովանդակության հասանելիությունը կամ անձնական հիշատակումները: Երբ ձեր էջը պատրաստ լինի, տարածեք այն, որպեսզի սկսեք աջակցություն ստանալ նվիրատվությունների, բաժանորդագրությունների կամ արտադրանքի վաճառքի միջոցով:




**Միջնորդավճարներ**

Buy Me a Coffee-ն գանձում է 5% միջնորդավճար ձեր եկամուտից: Բացի հարթակի վճարից, Stripe-ը գանձում է վճարումների մշակման վճար, որը սովորաբար կազմում է մոտ 2,9% + $0,30 մեկ գործարքի համար՝ կրեդիտ քարտով վճարումների համար:

## KUNA Pay

KUNA Pay-ը **(https://kunapay.io)** կրիպտոարժույթով վճարումներ ընդունող հարթակ է, որը թույլ է տալիս լրատվամիջոցներին և այլ կազմակերպություններին նվիրատվություններ և վճարումներ ստանալ կրիպտոարժույթով: KUNA Pay-ի միջոցով դուք կարող եք ստեղծել հաշիվ-ապրանքագրեր ու անվտանգ վճարային հղումներ և իրական ժամանակում հետևել բոլոր գործարքներին: Հարթակում հասանելի են բազմաթիվ կրիպտոարժույթներ, մասնավորապես՝ Bitcoin, Ethereum, Tether և այլն: KUNA Pay-ը թույլ է տալիս մուտքային

վճարումները ավտոմատ կերպով վերածել եվրոյի կամ թողնել դրանք կրիպտոարժույթի տեսքով:




**Ինչպես օգտագործել**

Գրանցվեք KUNA Pay հարթակում և ստեղծեք հաշիվ, իսկ հաշվի կառավարման էջում ավելացրեք ձեր ընկերությունը (կազմակերպությունը) և անցեք վավերացում: Վավերացման գործընթացում անհրաժեշտ կլինի տրամադրել կազմակերպության գրանցման փաստաթղթերը, անձնագիր և հաստատել հասցեն:

Հաջորդ փուլում ստեղծեք կրիպտոարժույթային հաշիվներ և տարածելի հղումներ՝ ձեր դոնորներից և հաճախորդներից կրիպտոարժույթային վճարումներ ստանալու համար:

**KUNA Pay-ի օգտագործման օրինակ**

Bihus.info հարթակն օգտագործում է KUNA Pay-ը՝ կրիպտոարժույթով նվիրատվություններ ստանալու համար: Կազմակերպության էջում՝ https://checkout.kunapay.io/bihusinfo, օգտատերերը կարող են ընտրել իրենց հարմար կրիպտոարժույթը և նվիրատվություն կատարել՝ աջակցելով bihus.info-ի խմբագիրներին: Սա թույլ է տալիս bihus.info-ին ներգրավել դոնորներ ամբողջ աշխարհից և արագ և ապահով միջոցներ ստանալ:




## Ko-Fi

**Հասանելի է Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի և Լեհաստանի բովանդակություն ստեղծողների համար:*

Ko-Fi-ն (https://ko-fi.com/) առցանց հարթակ է, որտեղ բովանդակություն ստեղծողները կարող են ֆինանսական աջակցություն ստանալ իրենց լսարանից: Պլատֆորմը երկրպագուներին թույլ է տալիս նվիրաբերել փոքր գումարներ, որոնք խորհրդանշորեն համեմատվում են մեկ գավաթ սուրճի արժեքի հետ՝ որպես երախտագիտության նշան ստեղծագործության համար:

Ko-fi-ն գնահատվում է իր պարզությամբ և ճկունությամբ. այստեղ կարելի է ընդունել նվիրատվություններ, գործարկել բաժանորդագրություններ և վաճառել ապրանքներ:

Բովանդակություն ստեղծողները կարող են ձևավորել իրենց էջը՝ ավելացնելով նկարագրություն, բրենդային տարրեր և «Ինձ սուրճ հյուրասիրեք» կոճակ՝ նվիրատվությունները հեշտությամբ ընդունելու համար:







Բովանդակություն ստեղծողները Ko-Fi-ն օգտագործում են.

- երկրպագուներից և բաժանորդներից միանվագ նվիրատվություններ ստանալու համար,

- բացառիկ բովանդակությամբ բաժանորդագրություններ ստեղծելու համար (ինչպես Patreon-ում),
- թվային ապրանքներ (օրինակ՝ էլեկտրոնային գրքեր, դասեր կամ արվեստի գործեր) և ֆիզիկական իրեր վաճառելու համար,
- պատվերով բովանդակություն ստեղծելու հայտեր ընդունելու համար,
- կոնկրետ սահմանված նպատակով դրամահավաքներ անցկացնելու համար,
- անձնական կամ ստեղծագործական նախագծերի համար դրամական միջոցներ հավաքելու համար:

**Ինչպես գրանցվել**

Այցելեք Ko-Fi կայք և սեղմեք «Գրանցվել», այնուհետև ընտրեք, թե ինչպես գրանցվել՝ Էլեկտրոնային փոստով, Google հաշվի կամ սոցիալական ցանցերի միջոցով: Հաջորդ քայլով ստեղծեք ձեր էջը՝ նշելով ձեր անունը, օգտանունը և գործունեության համառոտ նկարագրությունը: Այնուհետ կարող եք կարգավորել ձեր էջը՝ ավելացնելով պատկերներ և կցելով վճարային համակարգեր, ինչպիսիք են PayPal-ը կամ Stripe-ը՝ նվիրատվություն ստանալու համար: Էջը կարգավորելուց հետո կարող եք կիսվել հղումով ձեր լսարանի հետ:



**Միջնորդավճարներ**

Ko-fi-ն միանվագ նվիրատվություններից միջնորդավճար չի գանձում, սակայն դրանց նկատմամբ կիրառվում են PayPal-ի կամ Stripe-ի միջոցով վճարումների մշակման ստանդարտ միջնորդավճարներ, որոնք սովորաբար կազմում են մոտ 2-3%:

Եթե դուք **Ko-fi Gold** բաժանորդ չեք, սակայն վաճառք եք իրականացնում կամ բաժանորդագրություն եք առաջարկում, հարթակը գանձում է 5% միջնորդավճար: Ko-fi Gold-ի բաժանորդագրությունն արժե ամսական 6 դոլար կամ տարեկան 66 դոլար. այն ապահովում է լրացուցիչ հնարավորություններ, ինչպիսիք են պրոֆիլի ընդլայնված կարգավորումներ, վերլուծական գործիքներ և 5% միջնորդավճարի չեղարկում՝ վաճառքների ու բաժանորդագրությունների համար:

## Biggggidea.com

**Հասանելի է միայն Ուկրաինայում բանկային հաշիվ ունեցող անհատներին և կազմակերպություններին*

Bigggggidea.com-ը (https://biggggidea.com) ուկրաինական քրաուդֆանդինգային հարթակ է, որը հայտնի է որպես Spilnokosht, և որը աջակցում է տարբեր սոցիալական, մշակութային և նորարարական նախագծերի: Biggggidea.com հարթակում նախագիծ սկսելու համար նախ գրանցվեք: Ներկայում միայն Ուկրաինայում բանկային հաշիվ ունեցող անհատները կամ կազմակերպությունները կարող են նախագծեր ստեղծել:



Գրանցվելուց հետո ընտրեք երկու տարբերակներից մեկը՝ դրամահավաք կամ համագործակցություն:

Գոյություն ունի դրամահավաքի երեք տարբերակ.

1. **Միանվագ դրամահավաք**. հարմար է կարճաժամկետ նախագծերի համար՝ հստակ սահմանված նպատակով, ժամկետներով և ֆիքսված բյուջեով:
2. **Ամսական դրամահավաք**. իդեալական է երկարաժամկետ նախաձեռնությունների համար, որոնք պահանջում են կանոնավոր ամսական ֆինանսավորում՝ գործառնական ծախսերը ծածկելու կամ շարունակական նպատակներին հասնելու համար:
3. **Ընկերների միջև դրամահավաք.** հիանալի տարբերակ ընկերներ և ծանոթներ ներգրավելու համար՝ աջակցելու գոյություն ունեցող նախագծին, օրինակ՝ տարեդարձի, ծննդյան օրվա կամ այլ հատուկ իրադարձության առիթով:

**Ինչպես դիմել նախագծի համար**




Սկսեք լրացնել դիմումը՝ նշելով նախագծի անվանումը, նկարագրությունը, բյուջեն, պահանջվող գումարը և կոնտակտային տվյալները: Դիմումը ներկայացնելուց հետո այն կանցնի ստուգման փուլ, որը կարող է տևել մինչև 25 օր: Հաստատվելուց հետո դուք կարող եք սկսել ձևավորել ձեր քարոզարշավի էջը Biggggidea.com-ում: Կարող եք խմբագրել և հարստացնել էջը տեսանյութերով, լուսանկարներով և տեքստով նույնիսկ մինչև վերջնական հաստատումը: Հարթակի կողմից վերջնական վերանայումից հետո ձեր քարոզարշավը կակտիվանա:




Որպես նախագծի ստեղծող՝ դուք կկարողանաք ստեղծել դինամիկ էջ, կառավարել ձեր քրաուդֆանդինգի արշավը, սահմանել նպատակներ և վերջնաժամկետներ, ավելացնել պարգևներ դոնորների համար, կիսվել թարմացումներով, շփվել աջակիցների հետ և, իհարկե, ստանալ նվիրատվություններ: Գումարները կվճարվեն անմիջապես ձեր կցված բանկային հաշվին կամ քարտին արշավի նպատակներին կամ համապատասխան փուլերերին հասնելուց հետո՝ կախված ձեր դիմումում նշված պայմաններից: Թափանցիկություն ապահովելու համար ձեզնից պահանջվում է դոնորներին տրամադրել ամսական հաշվետվություններ ֆինանսների և նախագծի առաջընթացի վերաբերյալ:

Bigggggidea.com-ը նվիրատվությունների համար միջնորդավճար չի գանձում. հարթակի եկամուտը գոյանում է բացառապես դոնորների թողած կամավոր նվիրատվություններից:

## Particip.md

**Հասանելի է միայն Մոլդովայում բանկային հաշիվ ունեցող անհատներին և կազմակերպություններին*

Particip.md–ն (https://www.particip.md) հարթակ է Մոլդովայի քաղաքացիների համար, որը թույլ է տալիս նրանց ստեղծել, աջակցել և ֆինանսավորել ծրագրեր, որոնք ուղղված են երկրում առկա կարևոր խնդիրների լուծմանը: Particip.md հարթակում նախագիծ սկսելու համար նախ գրանցվեք: Ներկայում միայն Մոլդովայում բանկային հաշիվ ունեցող անհատները կամ կազմակերպությունները կարող են նախագծեր ստեղծել: Գրանցվելուց հետո ընտրեք երկու տարբերակներից մեկը՝ դրամահավաք կամ համագործակցություն:




Գոյություն ունի դրամահավաքի երեք տարբերակ.

1. **Միանվագ դրամահավաք**. հարմար է կարճաժամկետ նախագծերի համար՝ հստակ սահմանված նպատակով, ժամկետներով և ֆիքսված բյուջեով:
2. **Ամսական դրամահավաք**. իդեալական է երկարաժամկետ նախաձեռնությունների համար, որոնք պահանջում են կանոնավոր ամսական ֆինանսավորում գործառնական ծախսերը ծածկելու կամ շարունակական նպատակներին հասնելու համար:
3. **Ընկերների միջև դրամահավաք**. hիանալի տարբերակ ընկերներ և ծանոթներ ներգրավելու համար՝ աջակցելու գոյություն ունեցող նախագծին, օրինակ՝ տարեդարձի, ծննդյան օրվա կամ այլ հատուկ իրադարձության առիթով:

**Ինչպես դիմել նախագծի համար**

Սկսեք լրացնելով դիմումը՝ նշելով նախագծի անվանումը, նկարագրությունը, բյուջեն, պահանջվող գումարը և կոնտակտային տվյալները:Դիմումը ներկայացնելուց հետո այն կանցնի ստուգման փուլ, որը կարող է տևել մինչև 25 օր: Հաստատվելուց հետո դուք կկարողանաք սկսել ձեր քարոզարշավի էջի մշակումը Particip.md կայքում: Կարող եք խմբագրել և հարստացնել էջը տեսանյութերով, լուսանկարներով և տեքստով նույնիսկ մինչև վերջնական հաստատումը:

Particip.md-ը նվիրատվությունների համար միջնորդավճար չի գանձում. հարթակի եկամուտը գոյանում է բացառապես դոնորների թողած կամավոր թեյավճարներից:

## ReArmenia

**Հասանելի է միայն Հայաստանում բանկային հաշիվ ունեցող անհատներին և կազմակերպություններին*

ReArmenia-ն (https://rearmenia.com/en) համաշխարհային հարթակ է հայերի համար, որը հնարավորություն է տալիս ստեղծել, աջակցել և ֆինանսավորել նախագծեր՝ ուղղված Հայաստանի կարևոր խնդիրների լուծմանը:

ReArmenia հարթակում նախագիծ սկսելու համար նախ գրանցվեք: *Ներկայում նախագծեր կարող են ստեղծել միայն Հայաստանում բանկային հաշիվ ունեցող անհատները կամ կազմակերպությունները:* Գրանցվելուց հետո ընտրեք երկու տարբերակներից մեկը. **դրամահավաք** կամ **համագործակցություն**.




Գոյություն ունի դրամահավաքի երեք տարբերակ.

1. **Մեկանգամյա.** հարմար է կարճաժամկետ նախագծերի համար՝ հստակ սահմանված նպատակով, ժամկետներով և ֆիքսված բյուջեով:
2. **Ամսական.** իդեալական է երկարաժամկետ նախաձեռնությունների համար, որոնք պահանջում են կանոնավոր ամսական ֆինանսավորում՝ գործառնական ծախսերը ծածկելու կամ շարունակական նպատակներին հասնելու համար:
3. **Օժանդակ.** գերազանց տարբերակ՝ ընկերներ և ծանոթներ ներգրավելու համար՝ աջակցելու գոյություն ունեցող նախագծին, օրինակ՝ մեդիայի տարեդարձի, ծննդյան օրվա կամ այլ հատուկ իրադարձության առիթով:

4. **ՔՀԿ**. հարթակը իրականացնում է հանգանակություններ և գումարները տրամադրում համագործակցող հասարակական կազմակերպություններին:
5. **Անհատական**. հարմար է անձնական կոնկրետ նպատակի՝ բուժման, կրթության համար դրամահավաք կազմակերպելու համար:




**Ինչպես դիմել նախագծի համար**

Սկսեք լրացնելով ձևաթուղթը՝ նշելով նախագծի անվանումը, նկարագրությունը, բյուջեն, պահանջվող գումարը և կոնտակտային տվյալները: Ներկայացվելուց հետո ձեր դիմումը կենթարկվի համապատասխանության ստուգում, որը կարող է տևել մինչև 25 օր: Հաստատվելուց հետո դուք կարող եք սկսել ձեր քարոզարշավի էջի մշակումը reArmenia.com կայքում: Դուք կարող եք խմբագրել և հարստացնել էջը տեսանյութերով, լուսանկարներով և տեքստով նույնիսկ մինչև վերջնական հաստատումը:




Վերանայման խորհրդի կողմից վերջնական վերանայումից հետո ձեր քարոզարշավը կակտիվանա հարթակում: Որպես նախագծի ստեղծող՝ դուք կկարողանաք ստեղծել դինամիկ էջ, կառավարել ձեր քրաուդֆանդինգի արշավը, սահմանել նպատակներ և վերջնաժամկետներ, ավելացնել կամընտիր պարգևներ դոնորների համար, կիսվել թարմացումներով, շփվել աջակիցների հետ և, իհարկե, ստանալ նվիրատվություններ: Գումարները կվճարվեն անմիջապես ձեր կապակցված բանկային հաշվին կամ քարտին, քանի որ քարոզարշավի նպատակները կամ նշաձողերը ձեռք են բերվում՝ հաշվի առնելով դիմումի գործընթացի ընթացքում սահմանված պայմանները:

Թափանցիկություն ապահովելու համար ձեզնից պահանջվում է դոնորներին տրամադրել ամսական ֆինանսական և ծրագրի առաջընթացի հաշվետվություններ:

**Միջնորդավճարներ**

reArmenia-ն նվիրատվությունների համար միջնորդավճար չի գանձում. հարթակի եկամուտը գոյանում է բացառապես դոնորների թողած կամավոր նվիրատվություններից:

# Համատեքստային գովազդի և բովանդակության վաճառքի գործիքներ

## Google AdSense

**Հասանելի է անհատներին և կազմակերպություններին Հայաստանից, Վրաստանից, Ուկրաինայից, Մոլդովայից և Լեհաստանից:*

Google AdSense (https://adsense.google.com/start/) ծառայություն է, որը թույլ է տալիս կայքերի սեփականատերերին գումար վաստակել գովազդի միջոցով: Google-ը ավտոմատ կերպով ընտրում է գովազդ, որը համապատասխանում է կայքի բովանդակությանը և նրա այցելուների հետաքրքրություններին: Եկամուտը գոյանում է, երբ օգտատերերը դիտում են գովազդ, կամ սեղմում են այն: Գովազդը ստեղծվում և վճարվում է գովազդատուների կողմից՝ գովազդելու իրենց ապրանքները կամ ծառայությունները, և կայքի եկամուտը կախված է գովազդատուների կողմից ցուցադրությունների և սեղմումների համար սահմանված դրույքաչափերից:

Google AdSense-ի հետ աշխատելու համար կայքի սեփականատերը պետք է հատուկ գովազդային ծածկագիր ավելացնի՝ գովազդի տեղադրումը նշելու համար: Google-ն իրականացնում է գովազդատուների հետ բոլոր աշխատանքները, ներառյալ վճարումների մշակումը:

**Ինչպես սկսել**

AdSense հաշիվ ստեղծելու համար կայքի սեփականատերերը և բովանդակություն ստեղծողները պետք է ունենան Google հաշիվ (առկա կամ նոր) և իրենց պատկանող բնօրինակ բովանդակություն, օրինակ՝ AdSense-ին համապատասխանող կայք կամ բլոգ: Ակտիվացնելու համար դուք պետք է տրամադրեք վճարման տվյալները և ավելացնեք AdSense կոդը կայքում: Google-ը սովորաբար ստուգում է ձեր հաշիվը և կայքը մի քանի օրվա ընթացքում, բայց երբեմն այս գործընթացը կարող է տևել մինչև 2-4 շաբաթ: Հաստատվելուց հետո գովազդները կսկսեն հայտնվել կայքում, և դուք կարող եք սկսել գումար վաստակել:







AdSense-ը գործում է ամսական վճարումների ցիկլի վրա՝ մշակելով վճարումները յուրաքանչյուր ամսվա 21-ից 26-ն ընկած ժամանակահատվածում, պայմանով, որ հաշվի մնացորդը հասնում է նվազագույն վճարման գումարին և չկան պահումներ: Վճարման շեմը, սովորաբար 100 դոլար է: Վճարումները կատարվում են այս շեմը հասնելուց հետո:

Այնպիսի երկրներում, ինչպիսիք են Հայաստանը և Վրաստանը, վճարումները սովորաբար կատարվում են բանկային փոխանցման միջոցով, որը միջոցները մուտքագրում է անմիջապես տեղական բանկային հաշվին: Այս գործընթացը կարող է տևել մինչև 15 աշխատանքային օր:

**Միջնորդավճարներ**

AdSense-ը գանձում է 20% միջնորդավճար AdSense-ի բովանդակության համար գոյացած եկամուտից՝ հրատարակողներին տալով եկամուտի 80%-ը: Google Ads-ի միջոցով գնված գովազդի համար միջնորդավճարը կազմում է 32%:

## YouTube գործընկեր ծրագիր[1]

**Հասանելի է Վրաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի և Լեհաստանի բովանդակություն ստեղծողների համար:*

Թվարկված երկրներում բովանդակություն ստեղծողները կարող են դրամայնացնել իրենց YouTube ալիքները գովազդի, բաժանորդագրությունների և դրամայնացման այլ գործիքների միջոցով՝ պայմանով, որ նրանք համապատասխանում են ծրագրի պահանջներին:

YouTube-ի գործընկերների ծրագիրը հնարավորություն է տալիս բովանդակություն ստեղծողներին եկամուտ ստանալ իրենց բովանդակության վրա ցուցադրվող գովազդից:

### Ինչպես սկսել

YouTube-ի գործընկերների ծրագրին (YPP) մասնակցելու համար ստեղծողները պետք է բավարարեն մի քանի պայմաններ: Նրանց անհրաժեշտ է.

- հետևել YouTube-ի դրամայնացման կանոններին,
- ապրել մի տարածաշրջանում, որտեղ հասանելի է YouTube Partner ծրագիրը,
- ալիքում չունենալ Համայնքի կանոնների ակտիվ խախտումներ,
- ունենալ ակտիվ AdSense YouTube հաշիվ՝ կապված իրենց ալիքի հետ,
- ունենալ 1000 բաժանորդ և 4000 վավեր հանրային ժամ դիտված վերջին 12 ամիսների ընթացքում կամ 1000 բաժանորդ և 10 միլիոն վավեր Shorts-ի դիտումներ վերջին 90 օրվա ընթացքում:




[1] https://support.google.com/youtube/answer/7101720




Բոլոր պահանջները բավարարելուց և YouTube-ի գործընկերների ծրագրին (YPP) դիմելուց հետո բովանդակություն ստեղծողների ալիքները վերանայվում են՝ YouTube-ի քաղաքականությանը համապատասխանությունն ապահովելու համար: Ստուգման գործընթացը սովորաբար տևում է մեկ ամիս:

YPP-ին միանալուց հետո բովանդակություն ստեղծողները կարող են սկսել դրամայնացնել իրենց ալիքները այնպիսի գործառույթների միջոցով, ինչպիսիք են Դիտել էջի գովազդը, Shorts Feed Ads, Բաժանորդագրություններ, Super Chats և Shopping:

YouTube-ի գործընկերների ծրագրի միջոցով վճարումներ ստանալու համար հեղինակները պետք է տրամադրեն իրենց հարկային տվյալները և կատարեն ինքնության և հասցեի հաստատման գործընթացը, երբ նրանց եկամուտները հասնեն որոշակի մակարդակի: Վճարումները կատարվում են, երբ հեղինակներն իրենց AdSense հաշվում վաստակում են առնվազն $100 (կամ տեղական արժույթի համարժեքը): Եթե ամսվա ընթացքում շեմը չկատարվի, ապա վաստակած միջոցները տեղափոխվում են հաջորդ ամիս՝ մինչև նվազագույնի հասնելը: Վրաստանում վճարումները կատարվում են բանկային փոխանցումով:

**Միջնորդավճարներ**

YouTube-ը 45% միջնորդավճար է վերցնում դիտման էջի գովազդից, ուստի ստեղծողները ստանում են իրենց հանրային տեսանյութերում ցուցադրվող գովազդից ստացված եկամուտի 55%-ը: «Shorts» ֆիդում գովազդի համար YouTube-ը պահպանում է եկամտի 55%-ը, իսկ ստեղծողները ստանում են մնացած 45%-ը՝ ըստ իրենց դիտումների:

# Telegram Tribute

**Հասանելի է Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի և Լեհաստանի բովանդակություն ստեղծողների համար:*

Tribute-ը ([https://t.me/s/TributeNewsEN](https://t.me/s/TributeNewsEN)) Telegram-ում ներկառուցված ծառայություն է, որը թույլ է տալիս բովանդակություն ստեղծողներին դրամայնացնել իրենց ալիքները՝ օգտագործելով վճարովի բաժանորդագրություններ և նվիրատվություններ: Այն իդեալական է նրանց համար, ովքեր օգտագործում են Telegram-ը մասնագիտական կամ ստեղծագործական աշխատանքի համար, ներառյալ ազդեցիկ անձինք, լրատվական, բլոգային, բացառիկ բովանդակություն ստեղծողները:

**Ինչպես սկսել օգտվել Tribute-ից**Tribute-ի հետ աշխատելու համար դուք պետք է անցնեք հաստատման գործընթաց: Սա ներառում է Tribute բոտի ավելացումը որպես ալիքի ադմինիստրատոր և անձը հաստատող փաստաթղթերի տրամադրումը:







Երբ բոտն

ավելացվի, հարթակը կստուգի ձեր ալիքը՝ համոզվելու, որ այն համապատասխանում է հիմնական պահանջներին: Հաջող ստուգումից հետո դուք կկարողանաք ստեղծել բաժանորդագրություններ կամ նվիրատվություններ՝ մուտքագրելով վճարման մանրամասները, ընտրելով վճարումների ստացման երկիրը և եղանակը

**Վճարումներ**

Վճարումները կատարվում են ամսական երկու անգամ՝ 10-ին և 25-ին (կամ հաջորդ աշխատանքային օրը): Հաշվարկային ժամկետները ներառում են գործարքները՝ ամսի 1-ից 15-ը և 16-ից մինչև ամսվա վերջ: Բանկային քարտից կանխիկացման նվազագույն գումարը 100 եվրո է: Եթե այս գումարը չի հավաքվում, մնացորդը փոխանցվում է հաջորդ վճարման օրվան:

**Միջնորդավճարներ**

Tribute–ը գանձում է 10% միջնորդավճար յուրաքանչյուր գործարքի համար: Այս միջնորդավճարը ծածկում է ինչպես սպասարկման վճարը, այնպես էլ վճարումների մշակման ծախսերը:

## Medium

**Affiliate ծրագիրը հասանելի է հեղինակներին Հայաստանից, Մոլդովայից եվ Լեհաստան.*

Medium-ը (https://medium.com) հարթակ է, որտեղ գրողները կարող են իրենց գաղափարները, գիտելիքներն ու փորձը կիսել համաշխարհային լսարանի հետ՝ միաժամանակ գումար վաստակելով «Medium Affiliate Program»-ի միջոցով: Հրապարակելով բարձրորակ և օրիգինալ բովանդակություն՝ հեղինակները կարող են դրամայնացնել իրենց հոդվածները և գրավել հավատարիմ լսարան: Հեղինակները կարող են նաև մեծացնել իրենց բաժանորդների բազան՝ ներմուծելով էլփոստի հասցեներ և հոդվածներ ուղարկելով անմիջապես ընթերցողներին:

**Medium գործընկերային ծրագրին**

Medium affiliate ծրագրին միանալու համար գրողը պետք է լինի հարթակի բաժանորդ: Բաժանորդագրությունն արժե ամսական $5 կամ տարեկան $50 և ապահովում է անսահմանափակ մուտք դեպի կայքի ողջ բովանդակությունը՝ միաժամանակ աջակցելով հեղինակներին բաժանորդային վճարների բաշխման միջոցով: Նաև ծրագրի մասնակիցը պետք է լինի 18 տարեկանից բարձր, վերջին վեց ամսվա ընթացքում հրապարակած լինի առնվազն մեկ հոդված և ունենա բանկային հաշիվ հարթակի կողմից աջակցվող երկրում: Ներկայումս Medium affiliate ծրագրին կարող են մասնակցել հեղինակներ Հայաստանից և Մոլդովայից: Վճարումները մշակվում են Stripe-ի միջոցով և թողարկվում են, երբ եկամուտը գերազանցում է $10-ը:




**Հրապարակումների տեսակները և դրամայնացման մեթոդները**

Հեղինակները կարող են հրապարակել ինչպես ազատ, այնպես էլ փակ հոդվածներ: Անվճար հոդվածները հասանելի են բոլոր ընթերցողներին առանց սահմանափակումների, իսկ փակ նյութերը տրամադրում են միայն նախադիտում: Բացի այդ, հեղինակները կարող են թույլ տալ թեյավճար տալ այնպիսի հարթակների միջոցով, ինչպիսիք են Ko-Fi-ը կամ PayPal-ը, ինչը թույլ է տալիս ընթերցողներին ուղղակիորեն աջակցել իրենց աշխատանքին: Միայն այն բովանդակությունը, որի համար հեղինակն ունի լիարժեք իրավունքներ, կարող է դրամայնացվել, ինչը երաշխավորում է իսկությունն ու ինքնատիպությունը:







Medium-ում եկամուտները հաշվարկվում են՝ ելնելով այն ժամանակից, որ բաժանորդները ծախսում են հոդված կարդալու վրա, փոխազդեցությունների, ինչպիսիք են ծափահարությունները, մեկնաբանությունները և ընթերցողների տոկոսը, որոնք




առնվազն 30 վայրկյան են ծախսում էջում: Բացի այդ, ներգրավվածության բարձր մակարդակ ունեցող հոդվածները ստանում են լրացուցիչ բոնուսներ:

**Միջնորդավճար**

Medium-ը վճար չի գանձում, բայց վճարային պրոցեսոր Stripe-ը գանձում է գործարքների վճար, որը տատանվում է 2,9%-ից մինչև 4,9%՝ գումարած 0,30 դոլար յուրաքանչյուր գործարքի համար:

# Օրինակներ և հաջողության պատմություններ

## Kyiv Independent

Kyiv Independent-ը (https://kyivindependent.com/membership/?interval=month) առաջարկում է անդամակցության ծրագիր, որն աջակցում է Ուկրաինայում անկախ լրագրությանը: Անդամները ստանում են բացառիկ առավելություններ, ներառյալ հոդվածների, տեղեկագրերի, աուդիո բովանդակության և հատուկ նվերների վաղ հասանելիություն: Անդամակցության առաջարկվող փաթեթների արժեքները սկսվում են ամսական $5-ից, իսկ ավելի բարձր մակարդակները առաջարկում են լրացուցիչ բոնուսներ, ինչպիսիք են կուլիսային թարմացումները և անձնական շփումները թիմի հետ: Առաջարկվում են նաև կորպորատիվ անդամակցություններ:




The Kyiv Independent-ը բոլոր ընթերցողներին տրամադրում է անվճար մուտք դեպի իր բովանդակությունը՝ հավատարիմ մնալով բաց լինելու սկզբունքին: Միաժամանակ հրատարակությունը գործարկել է պրեմիում բաժանորդագրություն, որը ներառում է բացառիկ նյութեր և լրացուցիչ արտոնություններ բաժանորդների համար:



Հրատարակությունը մեծ հաջողությամբ օգտագործել է քրաուդֆանդինգի տարբեր հարթակներ, ինչպիսիք են Patreon-ը և GoFundMe-ն:Պահպանեք Ուկրաինայի լրատվամիջոցները, Պահպանեք Կիևի անկախությունը) Միայն Պատրեոն հարթակում հրատարակությունը ամսական հավաքում է $51,720, իսկ Kyiv Independent-ի GoFundMe արշավն արդեն հասել է 1,839,947 ֆունտ ստեռլինգի:

## Liga.net

LIGA.net-ն իր օգտատերերին առաջարկում է բաժանորդագրվել «առանց գովազդի» ծառայությանը (https://www.liga.net/adfree), որը թույլ է տալիս անջատել բաններային գովազդն ամբողջ կայքում: Այս բաժանորդագրությունը հասանելի է ամսական 60 գրիվնա կամ տարեկան 600 գրիվնա գնով, որը համարժեք է մոտավորապես €1,5 ամսական կամ €15 տարեկան: Բաժանորդագրությունն ինքնաբերաբար թարմացվում է ամեն ամիս, բայց օգտվողները միշտ կարող են չեղարկել այն:

LIGA Ad-Free-ի հիմնական առավելությունը հարմարավետությունն է այն օգտատերերի համար, ովքեր կարող են վայելել բովանդակությունը առանց նյարդայնացնող բաններային գովազդի: Սա հատկապես կարևոր է, քանի որ ընթերցողների վերջին խոշոր հարցման մասնակիցների գրեթե մեկ երրորդը նշել է, որ բաններային գովազդը ամենանյարդայնացնող գործոնն է:



## OC Մեդիա

OC Մեդիան (https://oc-media.org/membership/) առաջարկում է անդամակցության ծրագիր, որն աջակցում է անկախ լրագրությանը կովկասյան տարածաշրջանում: Անդամները ստանում են բացառիկ առավելություններ, ներառյալ հոդվածների, տեղեկագրերի, աուդիո բովանդակության և հատուկ նվերների վաղ հասանելիություն:

Անդամակցությունները սկսվում են ամսական $4,99-ից, իսկ ավելի բարձր մակարդակները առաջարկում են լրացուցիչ առավելություններ, ինչպիսիք են կուլիսային թարմացումները և անձնական շփումները OC Մեդիայի թիմի հետ: Առաջարկվում են նաև կորպորատիվ անդամակցություններ:



## New Voice Premium




New Voice (https://nv.ua) ապահովում է իր բովանդակության անվճար մուտքը բոլոր ընթերցողներին՝ հավատարիմ մնալով բացության սկզբունքին: Միաժամանակ հրատարակությունը գործարկել է պրեմիում բաժանորդագրություն, որը ներառում է բացառիկ նյութեր: Բաժանորդները ստանում են հատուկ սյունակներ, որոնք ուղարկվում են էլեկտրոնային փոստով շաբաթը երկու անգամ և չեն հրապարակվում կայքում: Բաժանորդագրության արժեքը՝ 1 ամիս՝ 99 գրիվնա, 1 տարի՝ 989 գրիվնա:




Բացի այդ, «Նոր Ձայնը» հրատարակում է տպագիր ամսագրեր՝ մեկ համարը 250 գրիվնա արժեքով, և տարվա բոլոր տպագիր համարների փաթեթը՝ (9 համար 2024 թվականին) 1959 գրիվնա արժեքով: Բաժանորդները նաև մուտք են ստանում հրատարակության արխիվ և կարող են մասնակցել խմբագիրների կողմից կազմակերպվող հատուկ միջոցառումներին և վեբինարներին:




Մեդիամաքս Պրեմիում

Մեդիամաքս-ը բոլոր ընթերցողներին տրամադրում է անվճար մուտք դեպի իր բովանդակությունը՝ հավատարիմ մնալով բաց լինելու սկզբունքին: Միևնույն ժամանակ, հրատարակությունը գործարկել է պրեմիում բաժանորդագրություն (https://premium.mediamax.am/am), որը ներառում է բացառիկ նյութեր: Բաժանորդները ստանում են հատուկ սյունակներ, որոնք ուղարկվում են էլեկտրոնային փոստով շաբաթը երկու անգամ և չեն հրապարակվում կայքում: Բաժանորդագրության արժեքը՝ 1 ամիս՝ 5000 դրամ, 3 ամիս՝ 12,000 դրամ, 6 ամիս՝ 18,000 դրամ:



Բացի այդ, Մեդիամաքսը հրատարակում և վաճառում է ինչպես խմբագրության, այնպես էլ այլ հեղինակների գրքերը:




## «Լրատվական» ռադիո

Ռադիո Լրատվականն իր մուլտիմեդիա հարթակում առաջարկում է ինչպես անվճար, այնպես էլ վճարովի բովանդակություն (https://lratvakan.am/sign-in/am/?next=/subscribe/am/) Օգտագործողները ցանկացած պահի կարող են դիտել, լսել և կարդալ բովանդակություն ցանկացած սարքից: Բաժանորդագրությունը ներառում է բացառիկ բնօրինակ բովանդակություն:

Բաժանորդագրության արժեքը՝ 1 ամիսը 990 դրամ, 6 ամիսը՝ 5500 դրամ և 1 տարին 8800 դրամ: Բաժանորդագրված բովանդակության տեղադրման ծավալը և ժամանակացույցը կարգավորվում են խմբագիրների կողմից և ենթակա են փոփոխման:



## JAMnews

JAMnews (https://jam-news.net) Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում գործող տարածաշրջանային մեդիա հարթակ է, որը տրամադրում է նորություններ և վերլուծություններ Կովկասում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: 2020 թվականից հարթակը դիմել է իր լսարանի ֆինանսական աջակցությանը՝ գործառնական ծախսերը հոգալու համար: Թեև լսարանի ներդրումները փոքր են, դրանք ծառայում են որպես ֆինանսավորման լրացուցիչ աղբյուր՝ լրացնելով դրամաշնորհներից ստացվող հիմնական եկամուտը:




JAMnews-ին կարող եք աջակցել դոլարով (USD) կամ եվրոյով՝ ընտրելով ֆիքսված գումար՝ $5, $10, $50, $100 կամ նշելով որևէ այլ գումար: Նվիրատվությունները կարող են լինել մեկանգամյա կամ կրկնվող (ամսական) PayPal-ի կամ բանկային քարտերի միջոցով, ինչը թույլ է տալիս ընթերցողներին շարունակել պլատֆորմի աշխատանքը:



## Netgazeti

Netgazeti (https://ru.netgazeti.ge) իր կայքում հրապարակում է հովանավորվող բովանդակություն և ունի հատուկ բաժին, որը կոչվում է «Հայտնի գովազդ»: Այս բաժնում օգտվողները կարող են հեշտությամբ գտնել և կարդալ բոլոր հոդվածները, որոնք հովանավորվող բովանդակության մաս են կազմում: Ստեղծելով այս առանձին տարածքը՝ Netgazeti-ն ապահովում է խմբագրական և գովազդային բովանդակության հստակ տարանջատում՝ թույլ տալով ընթերցողներին հարմար և մատչելի կերպով շփվել գովազդային նյութերի հետ:




Netgazeti-ն նաև գիրք է վաճառում իր կայքում՝ այն Բաթումիի մասին հոդվածների ժողովածու է, որը տարբեր ժամանակներում տպագրվել է Բաթումելեբի թերթի կողմից, որը Netgazeti-ի հիմնադիրն է:



## Bihus.info

Bihus.Info-ն (https://bihus.info) ունի առցանց խանութ՝ [https://bihus.info.fatline.bi](https://bihus.info.fatline.bi), որն ակտիվորեն աջակցում է հետաքննական լրագրությանը՝ առաջարկելով տարբեր ապրանքներ՝ նախագծի խորհրդանիշներով: Այս ապրանքների վաճառքից ստացված միջոցներն օգտագործվում են հակակոռուպցիոն հետաքննությունների և Bihus.Info թիմի լրագրողական այլ նախագծերի ֆինանսավորման համար: Սա թույլ է տալիս խմբագիրներին դիվերսիֆիկացնել եկամտի աղբյուրները:

Առցանց խանութում ապրանքների գնման միջոցով աջակցության հիմնական առավելությունն այն է, որ յուրաքանչյուր գնորդ նպաստում է որակյալ լրագրության զարգացմանը: Օգտատերերը կարող են հեշտությամբ ընտրել և պատվիրել իրենց նախընտրած ապրանքները, ինչպես նաև վճարել դրանց համար առցանց:



## Հավելված I

# Վճարային համակարգեր, որոնք օգտագործվում են գլոբալ քրաուդֆանդինգի և դրամայնացման հարթակների կողմից վճարումների համար.

| **Երկիրը** | **Paypal**[2] | **Stripe**[3] | **Payoneer**[4] | **Բանկային քարտեր** |
|---|---|---|---|---|
| **Հայաստան** | **Միայն ուղարկել**<br><br>*Օգտատերը միայն կարող է վճարումներ ուղարկել այս երկրից:*<br><br>*PayPal հաշվի սեփականատերը չի կարող գումար ստանալ կամ հանել:* | ⛔**Անմիջապես հասանելի չէ**<br><br>*Այն երկրների համար, որտեղ Stripe-ն ուղղակիորեն հասանելի չէ, Stripe Atlas-ը հնարավորություն է տալիս գրանցել ԱՄՆ ընկերություն, բացել ԱՄՆ բանկային հաշիվ և միացնել Stripe վճարումները՝ անկախ գտնվելու վայրից:* | ✅**Հասանելի է** | ✅**Հասանելի է** |
| **Վրաստան** | **Ֆոնդերի ուղարկում, ստացում և դուրսբերում**<br><br>*PayPal հաշվի սեփականատերը կարող է գումար ստանալ և հանել այս երկրից:* | ⛔ **Անմիջապես հասանելի չէ**<br><br>*Այն երկրների համար, որտեղ Stripe-ն ուղղակիորեն հասանելի չէ, Stripe Atlas-ը հնարավորություն է տալիս գրանցել ԱՄՆ ընկերություն, բացել ԱՄՆ բանկային հաշիվ և միացնել Stripe վճարումները՝ անկախ գտնվելու վայրից:* | ✅**Հասանելի է** | ✅**Հասանելի է** |

[2] https://developer.paypal.com/docs/payouts/standard/reference/country-feature/
[3] https://stripe.com/global
[4] https://checkoutdocs.payoneer.com/docs/supported-currency

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Մոլդովա** | **Ֆոնդերի ուղարկում, ստացում և դուրսբերում**<br><br>*PayPal հաշվի սեփականատերը կարող է գումար ստանալ և հանել այս երկրից:* | ⛔ **Անմիջապես հասանելի չէ**<br><br>*Այն երկրների համար, որտեղ Stripe-ն ուղղակիորեն հասանելի չէ, Stripe Atlas-ը հնարավորություն է տալիս գրանցել ԱՄՆ ընկերություն, բացել ԱՄՆ բանկային հաշիվ և միացնել Stripe վճարումները՝ անկախ գտնվելու վայրից:* | ⛔ **Հասանելի չէ** | ✅ **Հասանելի է** |
| **Ուկրաինա** | **Ֆոնդերի ուղարկում, ստացում և դուրսբերում**<br><br>*PayPal հաշվի սեփականատերը կարող է գումար ստանալ և հանել այս երկրից:* | ⛔ **Անմիջապես հասանելի չէ**<br><br>*Այն երկրների համար, որտեղ Stripe-ն ուղղակիորեն հասանելի չէ, Stripe Atlas-ը հնարավորություն է տալիս գրանցել ԱՄՆ ընկերություն, բացել ԱՄՆ բանկային հաշիվ և միացնել Stripe վճարումները՝ անկախ գտնվելու վայրից:* | ✅ **Հասանելի է** | ✅ **Հասանելի է** |
| **Լեհաստան** | **Լիովին տեղայնացված**<br><br>*PayPal հաշվի սեփականատերը կարող է այդ երկրից գումար ստանալ և հանել տեղական արժույթով:*<br><br>*PayPal հավելվածը հասանելի է տեղական լեզուներով:* | ✅ **Հասանելի է** | ✅ **Հասանելի է** | ✅ **Հասանելի է** |

Հասանելի վճարային համակարգեր ըստ երկրների

| Վճարային համակարգ | Հայաստան | Վրաստան | Մոլդովա | Ուկրաինա |
|---|---|---|---|---|
| Apple Pay | ✓ | ✓ | ✓ | ✓ |
| ArCa | ✓ | | | |
| Bank of Georgia's Express Pay | | ✓ | | |
| EasyPay | ✓ | | | |
| Electra Pay | | ✓ | | |
| Fast Shift | ✓ | | | |
| Google Pay | ✓ | ✓ | ✓ | ✓ |
| HayPost Pay | ✓ | | | |
| IDram | ✓ | | | |
| LiqPay | | | | ✓ |
| M-Pay | | | ✓ | |
| MobiDram | ✓ | | | |
| Monobank | | | | ✓ |
| PayBox | | ✓ | | |
| Paynet | | | ✓ | |
| Payoneer | ✓ | ✓ | ✓ | ✓ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Paypal | | ✓ | ✓ | ✓ |
| Portmone.com.ua | | | | ✓ |
| Privat24 | | | | ✓ |
| Stripe | ✓ | | | |
| TBC Pay | | ✓ | | |
| TelCell | ✓ | | | |
| Upay | ✓ | | | |
| Wize | ✓ | | | |

# Հեղինակներ



**Աննա Բարսեղյանը** լրագրող և հետազոտող է, որը մասնագիտացած է արհեստական բանականության՝ մեդիա արդյունաբերության վրա ունեցած ազդեցության ոլորտում: Նա ստացել է մագիստրոսի աստիճան Դարմշտադտի կիրառական գիտությունների համալսարանի Ստեղծարար ոլորտների առաջնորդության ֆակուլտետից, որտեղ թեզ է գրել «ԱԲ ազդեցությունը մեդիա արտադրության ապագայի վրա» թեմայով, ինչպես նաև բակալավրի աստիճան՝ Երևանի պետական համալսարանի Ժուռնալիստիկայի ֆակուլտետից: Աննան աշխատել է որպես մուլտիմեդիա լրագրող տարբեր լրատվամիջոցներում և Մեդիա նախաձեռնությունների կենտրոնում, որտեղ նաև ղեկավարել է առցանց անվտանգության և մարդու իրավունքների մասին «Ցանցառ» թվային խաղը: Նա համահեղինակել է «Մեդիաիգիտություն» ուսումնական ձեռնարկը և մեդիա տրանսֆորմացիայի ու մարդ-մեդիա երևույթի մասին առցանց դասընթացը:



**Արթուր Պապյանը** թվային անվտանգության և մեդիա ոլորտի փորձագետ է, ով ավելի քան տասը տարի աշխատել է որպես լրագրող և մուլտիմեդիա խմբագիր «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությունում: Վերջին տարիներին նա դասավանդել է առցանց մեդիա, առցանց լրագրություն և մասնագիտական էթիկա մի քանի բուհերում, այդ թվում՝ Երևանի պետական համալսարանում:

Արթուրը նաև CyberHUB-AM-ի համահիմնադիրն է, հարթակ, որը կիբերհարձակումներից պաշտպանում է լրագրողներին և քաղաքացիական հասարակությանը:



**Օլեգ Խոմենոկը** Internews Network-ի մեդիա-խորհրդատու և Հետաքննող լրագրողների գլոբալ ցանցի տնօրենների խորհրդի անդամ է, Ուկրաինայի լրագրողական էթիկայի հանձնաժողովի անդամ: Նա ունի ավելի քան 30 տարվա փորձ լրագրության, մեդիա կրթության և հետխորհրդային տարածքում ԶԼՄ-ների աջակցության նախագծերի կառավարման ոլորտում: Օլեգը հավաստագրված մեդիա խորհրդատու է և լրագրության թրեյներ, լրագրության և լրագրողների վերապատրաստման մի քանի ձեռնարկների հեղինակ:




Արագ զարգացող թվային աշխարհում լրատվամիջոցները, բլոգերները և մեդիա անձինք մշտապես փնտրում են արդյունավետ ու հուսալի վճարային համակարգեր և դրամայնացման գործիքներ՝ իրենց բովանդակության ստեղծմանն ու տարածմանն աջակցելու համար:

Երբ ավանդական եկամտի աղբյուրները սպառվում են՝ հիմնականում այն պատճառով, որ գովազդային եկամուտները կլանում են Facebook-ի և Google-ի նման գերիշխող հարթակները, ի հայտ են գալիս և արագորեն զարգանում են բովանդակության արտադրության ու բաշխման այլընտրանքային գործիքներ ու եկամտի հոսքեր:

Այս հետազոտությունն անդրադառնում է Հայաստանում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում հասանելի դրամայնացման գործիքներին ու վճարային համակարգերին՝ նկարագրելով դրանց գործառույթները, առավելությունները, սահմանափակումները և կիրառման օրինակները.

ISBN: 978-91-8082-274-9

:Fojo

Linnaeus University